ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1955 Общественные науки

Գլիս Մանուկյան

ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՆ

Արևմտահայ աշխարհիկ պոեզիան սկզբնավորվեց անցյալ դարի 40-ական թվականներից։ Նրա ծագման և զարգացման պատմությունն անվերապահորեն կապված է տաղանդավոր բանաստեղծ Մկրտիչ Պեշիկթաշլյանի անվան հետ։

Պեշիկթաշլյանի հասարակական գործունեությունն ու գրական ստեղծագործական կյանքը գերազանցապես ընթացավ Պոլսի միջավայրում։

1845 թ. Իտալիայից Պոլիս՝ իր ծննդավայրն է վերադառնում ապագա բանաստեղծը։ Նա ավարտել էր Մխիթարյանների Մուրատ-Ռաֆայելյան վարժարանը, որտեղ սովորել էր վեց տարի (1839—1845)։

Կաթոլիկ փակ դպրոցի սխոլաստիկ ու ճնշող մթնոլորտից հետո, 17 տարեկան բանաստեղծը առաջին անգամ կյանք է մտնում իրրև ինքնուրույն մարդ։

Սնված և դաստիարակված Մխիթարյան միաբանության կղերա-ֆեոդալական դաղափարախոսությամբ, Պեշիկթաշլյանը իր ստեղծագործության հիմնական մասով հաղթահարեց Մխիթարյան ազդեցությունը։

Մեծ չէ Պեշիկթաշլյանի գրական ժառանգությունը. նա կազմված է ընդամենը մի քանի տասնյակ բանաստեղծություններից ու պատմական ողբերգություններից։ Գրականության համար արժեք և հետաքրքրություն են ներկայացնում հատկապես նրա բանաստեղծությունները, որոնցից մի մասը արձագանքն են հեղինակի ապրած քաղաքական-հասարակական պայքարի, իսկ մյուսը՝ սիրային բանաստեղծություններ, միահյուսված բնության երգերի հետ։ Թվով փոքրաթիվ այս բանաստեղծությունների մեջ նա երգել է կենդանի լեզվով, հույզերի անմիջականությամբ, ջերմությամբ ու անկեղծությամբ։

Պեշիկթաշլյանի բանաստեղծություններն իրենց բովանդակությամբ, լեզվական բարձր կուլտուրայով ու գեղարվեստական մշակմամբ, նոր էջ էին արևմտահայ գրականության պատմության մեջ։

Պեշիկթաշլյանից հետո հանդես եկավ բանաստեղծների մի նոր սերունդ, որոնց մեջ գտնվեցին ուսուցչին գերազանցող տաղանդներ, ինչպիսին Պ. Դուրյանն էր, բայց Պեշիկթաշլյանի մատուցած ծառայությունը հայ գրականությանը երբեք չի կարող նսեմանալ։

Պեշիկթաշլյանի պոետական արվեստի տրադիցիաները տարիներ շարունակ ներշնչման աղբյուր են հանդիսացել երիտասարդ սերնդի համար։

Պեշիկթաշլյանը գրական հրապարակ մտավ որպես Մխիթարյան բանաստեղծ։ Նրա ստեղծագործության մեջ կա մի հատված, հատկապես սկզբնական շրջանի գործերը, որոնք կրկնությունն են Մխիթարյան պոեզիայի։

Իրենց թեմատիկայով այդ բանաստեղծությունները սահմանափակ են և միօրինակ։ Նրանց բովանդակությունը հին Հայաստանն է։ Ինչպես իր ուսուցիչները, նույնպես և Պեշիկթաշլյանը պատմական անցյալի մեջ տեսել է միայն

անհատ հերոսներին, թագավորներին, և նրանց անձնական բարեմասնությամբ է մեկնաբանել հայրենիքի երբեմնի փառքն ու հզորությունը։ Անցյալի էջերը բանաստեղծին հանգիստ չեն տվել, վրդովել են նրան բազմաթիվ խորհրդածություններով։ Ահա հայտնվում է «Հայաստանի ոգին», սգում է երկրի ավերակ վիճակը. չկան այլևս նախկին թագավորները, չկա և Հայաստանը, այժմ նա անկարելիր է։ Հեղինակը երկար չի զբաղվում, չի խորանում նրա իրական, ծանր վիճակի մեջ. անտեսելով ներկան, անձնատուր է լինում պատմությանը։ Վերակենդանացնելով իրենց դարն ապրած հերոսներին, շարադրում է լեգենդար փառքի ու հերոսության դրվագներ նրանց կյանքից։ Պատմության վերակենդանացումն ու ներբողումը, ուշադրության և հետաքրքրության սևեռումը դեպի անցյալը, կղերա-ֆեոդալական պրոպագանդայի քաղաքական միտումն էր, մասսաներին իրական կյանքից, հասարակական պայքարից քաղաքական ամեն մի նախաձեռնումից մեկուսացած պահելու համար։ Այս Մխիթարյան պոեզիայի հիմնական տենդենցն էր, որի ազդեցությանը ենթարկվեց Պեշիկթաշլյանը ստեղծագործության սկզբնական շրջանում։

Պեշիկթաշլյանը ցանկանում է Հայաստանի վերակենդանացումը։ Բայց ի՞նչ ձևով։ Այստեղ է, որ դրսևորվում է հեղինակի աշխարհայացքի սկզբնական շրջանի կղերա-ֆեոդալական գաղափարախոսությունը։

Բանաստեղծը հայրենիքի փրկության ուղիներ չի որոնում, այն սպասում է անցյալի հերոսների աճյունացած ոսկորների «կենսաձիր» լույսից, հին դյուցազունների մոխրից սերված ժառանգորդներն են, որ կենդանություն են տալու ազգին ու հայրենիքին։

Յարիցեն ժառանդաւորք ի ջերմ մոխրոց հին դիւցազանց,
Նոր կենդանութիւն շնորհել Ազգիս և Հայրենեաց[1]։

Պեշիկթաշլյանը հայրենիքի վերականգնման հեռանկարը փոխանակ նոր ուժերի և ապագայի մեջ տեսնելու, կատարում է հետադարձ քայլ դեպի պատմությունը և ներկան ցանկանում է փրկել անցյալով։

Բանաստեղծի սկզբնական շրջանի այս երկերը բացի թեմատիկայից ու գաղափարախոսությունից, արվեստով նույնպես Մխիթարյան ազդեցության արտահայտություն են։ Լեզուն գրաբար է, բարդ և անհասկանալի, զուրկ ներքին ջերմությունից ու կենդանությունից։ Նրանք չեն կարող ներգործել ընթերցողի տրամադրության, հոգեկան հույզերի և զգացումների վրա, որը հետևանք է ոչ միայն բովանդակության միօրինակության, այլ և նյութի գեղարվեստական թույլ մշակման։ Նրանք զուրկ են պարզությունից ու անմիջականությունից։

Մոռանալով չափի զգացումը, հեղինակը էջեր է նվիրում միօրինակ նկարագրությունների, բովանդակությունը խճողում ավելորդ պատկերներով։

Ինչպես Մխիթարյանների ողջ պոեզիան, Պեշիկթաշլյանի սկզբնական շրջանի բանաստեղծություններին հատուկ է ոճի և մտածողության՝ վերամբարձությունը, որը չբխելով երկի ներքին էությունից վերածվում է անբովանդակ ձևի։ Ձևապաշտության կուլտի ամենացայտուն արտահայտություններից էին «բռնահանգ» և «բռնավանկ» բանաստեղծությունները, որոնք երևան եկան Մխիթարյան պոեզիայի մեջ։

---

[1] Մ. Պեշիկբաշլյան, Բերթվածքներ և ճառեր, էջ 82։

Բարեբախտաբար նման երևույթները խոր արմատներ չունեցան Պեշիկթաշլյանի ստեղծագործության մեջ և հեղինակը ազատագրվեց նրանցից։

Պեշիկթաշլյանը երգել է նաև պատմական հայրենիքի բնությունը։ Բնությունը սակայն, ֆոն է միայն, երկի հիմնական բովանդակությունն ավելի խորացնելու և ամբողջացնելու մի միջոց։ Պեշիկթաշլյանի պատկերած բնությունը իրեն անծանոթ է, նա հեռավոր հայրենիքի անցյալ փառքերի կենդանի հիշատակն է, վերարտադրված բանաստեղծի երևակայությամբ։

Պեշիկթաշլյանը այս շրջանում, դեռևս չէր գտել ստեղծագործական այն ուղին, որի ուժը ոչ թե անցյալի փլատակներից ներշնչվելու, անծանոթ բնությունը գովերգելու, այլ իրական կյանքը, հարազատ բնությունը, մարդկային հույզերը երգելու մեջ էր։ Թեպետև ուժեղ, բայց անցողիկ մի շրջան էր Մխիթարյանների ազդեցությունը բանաստեղծի համար։ Նա որպես ստեղծագործող և քաղաքացի հասունացավ ու կազմակերպվեց հետագայում, երբ ճանաչեց իրական կյանքը։

Իբրև բանաստեղծ ստեղծագործության հաջորդ տարիներում Պեշիկթաշլյանը չզբաղվեց պատմական թեմատիկայով։ Հասարակական նոր պայմանների մեջ Պեշիկթաշլյանի ստեղծագործությունը թևակոխում էր մի նոր շրջան։

* * *

Պեշիկթաշլյանի բանաստեղծությունների ժողովածուն կազմված է ընդամենը մի քանի տասնյակ երգերից, որոնք իրավամբ համարվել են բանաստեղծական տաղանդի լավագույն նմուշներ։ Բովանդակությամբ նրանք բաժանվում են երկու հիմնական խմբի՝ սիրային բանաստեղծություններ միահյուսված բնության հետ և հայրենասիրական երգեր։

Մինչև Պեշիկթաշլյանը և նրան ժամանակակից պոեզիայում մերժված էր իրական կյանքը, կենդանի մարդը իր հույզերով, հոգեկան վայելքով ու տառապանքներով։ Փակ էր ու անթափանցելի մարդկային ներքնաշխարհը։

Պեշիկթաշլյանի սիրային բանաստեղծությունները համակված են վառ տրամադրությամբ, կենսուրախությամբ։ Բանաստեղծը չի տառապում կրքոտ զգացմունքների պոռթկումներով, լուռ տագնապով։ Նրան ժպտում է կյանքը, շուրջն ամեն ինչ պայծառ է ու ջինջ։ Սերը այն ուժեղ շաղախն է, որ հեղինակին կապում է բնության հետ։ Եվ դժվար է սահմանագծել, թե երբ է նա երգում բնությունը և երբ սերը. նրանք միշտ միաձուլված են հանդես եկել բանաստեղծի երգերի մեջ։ Բնությունը հագեցած է սիրով, որի ուժեղ ներգործմամբ հեղինակը ավելի լավ է հասկանում այն և ընկալում բազմակողմանի ձևով։ Բնությունը բանաստեղծի համար մեռած, անկենդան աշխարհ չէ, այլ մեծագույն ներշնչումների կենդանի և մշտական աղբյուր։ Պեշիկթաշլյանը չի երգել այն բազմաթիվ երևույթների մեջ, այլ մեծ մասամբ երգել է գարունը՝ բնության վերակենդանացումը, ծաղկումը, ստեղծելով իր հոգեվիճակի հետ ընդհանուր ներդաշնակություն։

Նրա երգած բնությունը թարմ է, կենսախինդ, ծաղկոտ ու կանաչ, լեցված սոխակի դայլայլով, զեփյուռի սոսափյունով, առվակի կարկաչով. այն գունեղ է և կենդանի։ Այս երգերի մեջ մենք տեսնում ենք իրեն՝ հեղինակին, ջինջ ու հստակ, հոգեկան պարզությամբ։ Պեշիկթաշլյանը սիրահար է բնու-

թյան խաղաղ վայրկյաններին, որոնց նկարագրությունը տրված է գերազանց վարպետությամբ։

Պեշիկթաշլյանը այլևս անծանոթ երկրի, երևակայությամբ պատկերած բնությունը չի երգում, ինչպես սկզբնական շրջանի ստեղծագործության մեջ, կոնկրետ է, հարազատ, նրա հմայքով ու հրապույրով է սնվել բանաստեղծը մանկության վաղ տարիներից սկսած մինչև կյանքի վերջը։

Ցալեմտաղն այն գիղեցիկ
Ռացի ժուռ գալ անհոգ, մոլար,
Ուր բյուր վտակ բյուրեղ ծոցիկ
Մատուցաներ տնկոց գալար [1]։

Պեշիկթաշլյանը առանց սեթևեթանքների է գծագրում բնության պատկերները, նրանք պարզ են, արտաքնապես անպաճույճ, բայց նկարչական տաղանդով վերարտադրված։

Բնությունը բանաստեղծի տրամադրությունների, հույզերի հավատարիմ ընկերակիցն է։ Անհոգության օրերին, սիրո ժամերին, հուսահատված վայրկյաններին, ամենուրեք միասին են։ Բնության անհուն բազմերանգություններից են հյուսված սիրած կույսի հմայիչ ու վառ պատկերները։

Աշուն է, ամեն ինչ դալկացած է ու լերկ, բնությունը զրկվել է վարդից, սոխակից, թիթեռներից։

Զրկա՛ զեփյուռ, զրկա՛ ծաղիկ,
Եվ ծաղկատարափ զրկա թիթեռ.
Զրկա՞ սոխակ, ո՛չ վարդենիք
Լրցյալ ցողով մարգարտահեռ [2]։

Բանաստեղծը չի վշտանում ամայացած տեսարանից, նա չի թախծում ծաղկեփնջերի, սպիտակափայլ շուշանների, գիշերային խոսնակի բացակայության համար։

Այլ ի՞նչ պիտին ծաղկանց փունջեր
Հորժամ նորա այտերն հույիս.
Այլ ի՞նչ պիտի վարդից հոտեր
Հորժամ նորա մոտ գրտնվիս։

Ո՞հ, մի՛ երթար դու տեսնելու
Ճերմակ շուշանն թե յիր ճյուղիկ
Ինչպես նազի գլուխն աղու,
Երբ հովն իրեն տա ողջյունիկ։

Տե՛ս թե կուսին փափուկ ուլան
Վերա ինչպես կը տատանի
Հույլ հոպոպյոք գեղածածան
Զքնաղ գլխիկ յուր նազելի։

[1] Մ. Պեշիկթաշլյան, Տաղեր, Երևան, 1947, էջ 28։
[2] Նույն տեղում, էջ 26։

Լո՛ւռ կաց, գիշերց սիրո՛ւն խոսնակ
Լրսե՛ մեկ մ՚ալ զյուր դայլայլիկ.
Լո՛ւռ կաց, լուսին երբ ի դաշնակ
Երթևեկեն մանու թաթիկք։

Այս բանաստեղծության մեջ Պեշիկթաշլյանը չի ներբողել աշունը, ինչպես ասացինք, նա ընդհանրապես սիրահար է փթթող գարնան, մերկացած աշնան միջոցով նա ցանկացել է ցույց տալ կույսի հրապույրները, որոնք գերազանց են քան բնության հրաշալիքները և փոխարինում են նրան։

Հուսադրման, երազներով լի շրջանին հաջորդում է հուսալքումը, սակայն բանաստեղծի մեջ չի առաջանում ատելություն դեպի սիրած էակը։ Այս Պեշիկթաշլյանի սիրային լիրիկայի հատկանշական կողմերից մեկն է։ Նա զգացել է սիրո հրապույրը, ոգևորվել է, ներշնչվել, և վայելքը կանխվել է մոտալուտ հուսախաբությամբ։

Հուսախաբման երդերին միահյուսված է մահվան ուրվականը, որը ոչ թե երևակայության ծնունդ էր, այլ իրական փաստ՝ լուրջ սպառնալիք հեղինակի կյանքին։

Պեշիկթաշլյանի հիշյալ բանաստեղծությունները չունեն նախկին կենսախնդությունը, չկա տրամադրության վերելք, այլ ընդհակառակը, զգացվում է ուժեղ բեկում։ Նրա երգերը համակված են հոռետեսական տրամադրությամբ, և նկատելի է հիասթափություն ու անտարբերություն դեպի շրջապատը։ Կյանքը դադարում է բանաստեղծին հետաքրքրելուց, խորտակված են երբեմնի հույսերն ու իղձերը։ Իր նամակներից մեկում նա գրում է.

«Իմ առողջությանս վիճակը միևնույնն է, կրնամ ըսել ավելի վատթար... Կսիրեի ատեն մը կյանքը և իրավունք ունեի սիրելու. բայց հիմա, որ անհուն զգացումներս՝ անհուն պատրանքներ դարձեր են, կյանքը ինձի համար ո՛չ հրապույր և ո՛չ արժեք մը ունի. ուսսի անոր կորուստն ալ՝ կամ կորստյան երկյուղը չի կրնար այլևս երևակայությունս վրդովել»[1]։

Այս շրջանին են պատկանում Պեշիկթաշլյանի «Մերձ ի մահ» գրված երգերը։

Պեշիկթաշլյանը հարուստ է հուզականությամբ, բայց ոչ փոթորկոտ, ջերմ է և սիրող, բայց ոչ կրքոտ, զգայուն է, առանց տվայտանքների։ Նույն հավասարակշռված զգացմունքներով, հանդարտ, բայց զսպված հոգեկան խռովքով հրաժեշտ է տալիս կյանքին։ «Մերձ ի մահ» երգերի մեջ չկա զայրույթի և կամ բողոքի ոչ մի արտահայտություն շրջապատի հանդեպ, ատելություն դեպի մարդիկ և վրիժառության զգացմունք «ասո աստված»։

Այսպես անձն իմ ընկճեցաւ ընդ բեռամբ մի ևեթ մտածման,
Ծիրանափայլ ոլորտ կենացս ահա ի գոյն հարաւ դալկան.
Շա՛տ իսկ տեսի, շա՛տ իսկ կրեցի. յո՛յս, ե՛րթ, փախի՛ր չկամիս ըզքեզ.
Մի՛ ըզհանգիստն իմ խրոովէք, ո՛վ ձայնք սիրոյ և բերկրանաց.
Ողջա՛մբ մնացէք, ոսկեա՛կ անուրջք, լուսատեսիկ երևոյթք,
Որ այնքան բոյր և այնքան զարդս ածիք աւուրց իմ գեղաշուք.
Սիրո՛ւն մոլորութիւն, մեղր անոյշ և մահածու։

[1] «Մասիս», 1893, № 3986, էջ 217։

Արբեցութիւն, որոյ գրկումն աղետաբեր է սրտի,
Դուք ոչ ևս էք, ա՜հ ոչ ևս էք, փախեան երազք քերթողականք.
Ողջա՛մբ գնացէք, սրփոեալ յուզուջս ըզբիւր պատրանս և յոյս զամէն,
Դիմեմ յուշիկ ի գերեզման, այն հանգստոց զիս ոչ խաբէ,
Առ սիրելօքս վաղամեռ, անդ ի տեղի ինձ առանձնակ
Հանգեայց և ես զոհ 'ւ անտրտում. գէթ անդանօր չեմ անոքիկ [1]։

Ժամանակակից երկու տաղանդավոր բանաստեղծների՝ Պեշիկթաշլյանի և Դուրյանի պոեզիայում հատուկ տեղ են զրավել «Մերձ ի մահ» երգերը։ Ինչպես Պեշիկթաշլյանը, Դուրյանը նույնպես դիտակցությամբ է դիմավորում մահվան, բայց որպիսի՜ մեծ տարբերություն երկու հեղինակների հոգեկան ողբերգության։ Դուրյանը խռովահույզ է, կրքոտ ու փոթորկոտ։ Մահվան ուրվականը տանջել է նրան, համակել տառապանքի, զայրույթի ու բողոքի ուժեղ շնչով։ Դուրյանի սոցիալական բողոքն է անհատական ողբերգությամբ արտահայտված։ Նա երբեք չի համակերպվել իր վիճակի հետ, նա ներողամտությամբ՝ ու սիրով չի բաժանվել աշխարհից, ինչպես Պեշիկթաշլյանը, այլ անեծքով։ Ներքին մաքառումների, ցասման ու ընդվզման պոռթկումով բանաստեղծը դիմում է առ «աստված ոխերիմ»-ը և հրաժեշտ տալիս կյանքին.

Իսկ թե կորնչի պիտի իմ հուսկ շունչ
Հոս մառախուղի մեջ համր անշշունջ,
Այժմեն թող որ շանթ մ'ըլլամ դալկահար,
Պրլլվիմ անվանդ, մրոնչեմ անդադար,
Թող անեծք մ'ըլլամ ու կողբդ խրբիմ,
Թող հորջորջեմ քեզ «աստված ոխերիմ» [2]։

Դուրյանի քննադատական, անհաշտ վերաբերմունքը դեպի իրականությունը արտահայտվել է ոչ միայն «Մերձ ի մահ» երգերի, այլ ողջ ստեղծագործության և հատկապես դրամատուրգիայի մեջ։ Եթե հեղինակի սկզբնական շրջանի երկերում զգալի է լիբերալիզմի ազդեցությունը, ապա նրանց մեջ մի ժամանակ ուրվագծվում էին դեմոկրատիզմի այն սաղմերը, որոնք հետագայում խորանալով ու ամբողջանալով կազմեցին բանաստեղծի աշխարհայացքի հիմքը։

Ապրելով մոտալուտ մահվան տրագեդիան, Պեշիկթաշլյանին չի զբաղեցնում հետմահվան ճակատագիրը։ Նրա վերջին ցանկությունն է հաղորդակից դառնալ բնության հետ և իր շիրմին միակ այցելու բարեկամ ընտրում է «դալկահար» լուսնին։

«Տե՛ս, փշրեմ աստ զիմ Քընար՝ լուսին մաղթեմ յետին հայեցուած
Մի՛ զուրկ թողուս ըզմըտերմիդ ըլցուրտ դամբան մենաւոր» [3]։

Այս չափով բավարարվում է բանաստեղծի պահանջը մարդկանցից ու բնությունից։

Պեշիկթաշլյանի վերջին շրջանի, այսինքն՝ «Մերձ ի մահ» գրված երգերը, ոչ միայն բովանդակությամբ, այլև արվեստով նույնպես տարբերվում են հե-

[1] Մ. Պեշիկթաշլյան. Տաղեր, Երևան, 1947, էջ 81։
[2] Պ. Դուրյան, Երկեր, Երևան, 1947, էջ 62—63։
[3] Մ. Պեշիկթաշլյան. Տաղեր, Երևան, 1947, էջ 77։

ղինակի սկզբնական շրջանի սիրային բանաստեղծություններից։ Արտահայտչական միջոցների, հույզերի վերարտադրման ձևերի մեջ զգացվում է որոշ բարդացում։ Ակնառու է հատկապես լեզվի փոփոխությունը, որն ամբողջությամբ գրաբար է և դժվարացնում է երկի ընկալումը։ Պեշիկթաշլյանի այս երկերը չունեն նախկին վարակիչ թեթևությունը գույների բազմերանգությամբ ու պայծառությամբ. նրանք այժմ մռայլ են, տրտմության քողով պարուրված։ Իրենց ձևով նրանք երկարաշունչ բանաստեղծություններ են, խոհական տրամադրություններով և լի անձնական հույզերով։

* * *

Պեշիկթաշլյանի պոեզիայի մեջ հատուկ տեղ են գրավում նրա հայրենասիրական երգերը, բովանդակությամբ և արվեստով միանգամայն տարբեր հեղինակի սկզբնական շրջանի հայրենասիրական բանաստեղծություններից։

Հետաքրքրությունը դեպի իրական կյանքը Պեշիկթաշլյանի հայրենասիրական բանաստեղծությունների կենսունակության հիմնական ակունքն է, որով նա հակադրվեց Մխիթարյան պոեզիայի կղերա-ֆեոդալական գաղափարախոսությանը և աղատագրվեց նրանց ազդեցությունից։

Պեշիկթաշլյանի վերոհիշյալ երգերը օրգանապես կապված են նրա հասարակական գործունեության հետ և արձագանքն են գեղարվեստական խոսքի միջոցով։ Այս բանաստեղծությունների մեջ հեղինակը երգել է ազատության համար պայքարող հերոսներին, եղբայրության, «ազգի» միասնության ու պահպանման գաղափարը, հայրենիքի սերն ու կարոտը, նրա ծանր վիճակը և գալիք արշալույսը։

Պեշիկթաշլյանի հայրենասիրական բանաստեղծություններին նոր բովանդակություն և թափ ներշնչեց 1862 թ. Զեյթունի ապստամբությունը։ Նրա պոեզիայի հայրենասիրական մոտիվները զարգացան պատմական կոնկրետ իրադրության մեջ։ Բանաստեղծը երգում է ոչ միայն հայրենիքի ծանր վիճակը, օտար լծի դեմ մարտի դուրս գալու բուռն ցանկությունը, այլ այն հերոսներին, որոնք ընդվզել են ստրկացնող բռնության դեմ։

Լինելով ժամանակակից Զեյթունի հերոսական ապստամբությանը, նա հանդես եկավ հասարակական ակտիվ գործունեությամբ։ Իբրև քաղաքացի Պեշիկթաշլյանը ոգևորվել է, խրախուսվել, իսկ որպես բանաստեղծ՝ ներշնչվել է։ Դեռ ավելին՝ ունեցել է նույնիսկ անձնական կապեր անմիջապես Զեյթունի հետ[1]։

Զեյթունի ապստամբությանը Պեշիկթաշլյանը նվիրել է չորս երգ՝ «Հայ քաջորդի», «Մահ քաջորդվույն», «Թաղումն քաջորդվույն» և «Հայ քաջուհին», որոնցից սկզբի երեք բանաստեղծությունները բովանդակությամբ կապվում են միմյանց հետ և կազմում են մի տրիլոգիա։

---

[1] Ս. Երիցյանը «Իմ ծանոթությունը Պ. Պեշիկթաշլյանի հետ» վերնագրով հուշերում ընդհանուր գծերով պատմում է Պեշիկթաշլյանի կապի մասին Զեյթունի ապստամբության հետ։ «Նա (Պեշիկթաշլյանը—Ս. Հ.) ներողություն խնդրեց ուշանալուն և պատմեց թե պատճառը մի քանի պարոնների հետ Զեյթունից եկած մասնավոր դրության պատասխաններ ուղարկելն էր» (տե՛ս «Փորձ», 1877, № 4, էջ 189)։

Ովքեր էին այդ պարոնները, ինչ դրություններ էին Զեյթունից ստացված և ինչ էր հատկապես նրանց պատասխանի բովանդակությունը, անհայտ է. հարցեր, որոնց պար-

Հայ քաջորդին հրաժարվում է կյանքի վայելքներից՝ բնության հմայքը, մոր սփոփանք, սիրուհու գգվանք, և այս բոլորի փոխարեն պահանջում է

— Կուզեմ վառոդ և գնդակներ։

Հաջորդ բանաստեղծությունը «Մահ քաջորդվույն»-ն է [1]։ Երիտասարդի ցանկությունը կատարված է. նա դուրս է եկել մարտի և թշնամու գնդակից ընկած է վիրավոր։ Արյունաքամ որդուն գտնում է մայրը, որը դեռևս օրորոցից նվիրել էր նրան այդ պայքարին.

Ինորեկ որդվույս կենացն արև
Ձեզի համար փայլի, հայեր»
Այսպես յայնժամ դու կ՝երգեիր՝
Օրորոցիս նըստյալ քովեր.

Անոնց համար շիջավ, և դուն
Ուրախ լուրեր տար ի Զեյթուն [2]։

Երկի մարտական ոգին չի թուլանում մոր և որդու սրտաճմլիկ հանդիպումից, ընդհակառակը վիրավոր զինվորը արհամարհում է իր ծանր վիճակը, նա զոհաբերվել է հանուն հայրենիքի.

Ո՞վ հայրենիք, ի հուր, ի բոց
Քո համար մեր սիրտք վառեցուն.

գաբանումը մեծ լույս կարող է սփռել Պեշիկթաշլյանի և թերևս նրա ժամանակակից որոշ անձանց հասարակական գործունեության, ինչպես և քաղաքական դեպքերի պարզաբանման վրա։

[1] Հետաքրքիր հիշողություններ ունի Ս. Երիցյանը այս բանաստեղծության հրատարակման դրդապատճառների մասին։

1862 թ. վերջերին, Զեյթունի անցքերից անմիջապես հետո Պոլիս է գալիս Զեյթունի դեպքերին մասնակից տեր Մովսեսը, որը հերոսական անցքերի ականատեսի սրտաշարժ նկարագրություններով դրավել էր ժամանակի երիտասարդության ուշադրությունը։ Տեր Մովսեսի ջերմեռանդ ունկնդիրներից էր և բանաստեղծ Պեշիկթաշլյանը։ Հանդիպումների վայրը Երիցյանների տունն էր, ուր իջևանել էր տեր Մովսեսը։

«Սովորականից ստեպ հաճախողը և ժամերով տեր Մովսեսի մոտ նստողը Պեշիկթաշլյանն էր։ Մի սրտաշարժ տեսարան էր հայ մարդու համար, երբ տեր Մովսեսի արած դեյթունցոց նկարագրությունը Պեշիկթաշլյանի խոշոր աչվրները արտասվոր կլցնեին և հետևարար այդ երկու հայասեր անձանց հոգվույն կրքերը կդրդռեին։ 1863-ի սկզբում ձմեռային մի ցուրտ երեկո էր, տեր Մովսեսի հետաքրքրական վեպերը գրված էին չորս կողմը խմբված երիտասարդների ուշադրությունը. նա պատմում էր մի սիրտ ճմլող անցք, թե ինչպես մի հուսահատ մայր, մի խղճուկ հայ կին, դիշերային լռության մեջ, պատերազմի դաշտի վերա փնտրում էր իր միակ որդվույն դիակը, որ մի օր առաջ մեծ ջարդ տված էր իր հայրենյաց թշնամյաց։ Խորին լռությամբ և մորմոքված սրտով լսում էինք այդ պատմությունը. տպավորությունը շատ մեծ էր... Նույն դիշերը հյուրերից մի քանիսը մնացին մեր տանը քնելու, որոնց թվում էր նաև Պեշիկթաշլյանը։ Մյուս օրը նախաճաշիկի ժամանակ, Պեշիկթաշլյանը կարդաց մի կտոր թղթի վրա մատիտով գրած հետևյալ բանաստեղծությունը «Մահ քաջորդվույն», որ գրած էր տեր Մովսեսի առաջին դիշերվա արած տխրալի պատմության ազդեցության ներքո» («Իմ ծանոթությունը Մ. Պեշիկթաշլյանի հետ», «Փորձ», 1877, № 4, էջ 191)։

[2] Մ. Պեշիկթաշլյան, Տաղեր, Երևան, 1946, էջ 33։

Կարմիր ներկան ձորք մեր, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զեյթուն։

Երրորդ բանաստեղծությունը «Քաջորդու թաղումն» է։ Զևով պարզ, բայց մեծ արվեստով ու հուզականությամբ է պատկերված ազատության պայքարում ընկած մարտիկի հուղարկավորությունը։ Նա անպաճույճ է, առանց հանդիսավորության, սակայն վեհ բովանդակությամբ։ Զեյթունցի պատանին չունի հարազատ սգացողներ, միայն բնությունն է լուռ վշտով ու խորհրդավոր անդորրով համակված.

Ո՛չ փող զարկինք, ո՛չ արձագանք լեռնասույզ
Սարե ի սար շարաշրշուկ տարին լուր.
Ու չերգեցինք ողբոց երգեր սրտահույզ
Երբ պատանվույն բացինք մրոայլ փոսին դուռ։

Գիշերային մունջ ըստվերներ շուրջ կային,
Երբ հրացանի կոթով ըզհող փորեցինք..
Լուսին միայն դողդոջ շողայր մեր գլխին,
Սուգ էր պատեր ըզդաշտ, բլուր և երկինք [1]։

Երեք բանաստեղծությունների դագաթնակետը՝ մարտական շնչի զորությամբ, հերոսականությամբ և հուզականությամբ «Թաղումն քաջորդվույն»-ն է։

Առաջին բանաստեղծությունը ներածություն է, նախապատրաստում ընդհանուր սյուժեի, երկրորդը՝ բուն բովանդակությունն է, իսկ վերջինը՝ ապոֆեոզը, երկի իմաստը մարմնավորող՝

Վասն հայրենյաց մեռար, դու շատ ապրեցար։

«Հայ քաջուհին» զեյթունցի կնոջ հերոսական նկարագրին նվիրված բանաստեղծություն է։ Պեշիկթաշլյանի հայուհին պատմական կոնկրետ դեմք չէ, բայց հայտնի է նույնպես, որ Զեյթունի ապստամբությանը մասնակցել է անխտիր ամբողջ բնակչությունը, տղամարդ, թե կին, մինչև իսկ ծերերն ու երեխաները։

Բանաստեղծության սկզբում նկարագրված է կանացի հրապույրներով ու հմայքով օժտված մարտական հայուհին, երիտասարդ, կյանքի վայելքներին դեռևս անտեղյակ, բայց տոգորված հայրենիքի ազատության գաղափարով։ Նա ռազմադաշտում է, կռվում է արիաբար մոլեգնող թշնամու դեմ, ուժ և խրախույս ներշնչելով շրջապատին։

Հայկուհի՛ն է, կտրիճ եղեք,
Հայկուհին տա խրախույս, հորդոր.
Ժանտից վրրա հուր տեղացեք,
Մինչև մոխիր դառնան բոլոր։

Ու շանթեցին, հարցե՛ք, ո՞ւր է
Այն բազմամրոխ թրքին բանակ,
Սևափրփուր շունչն արձրկե
Զեյթունցիին ոտքերուն տակ [2]։

[1] Մ. Պեշիկթաշլյան, Տաղեր, Երևան, 1947, էջ 34։
[2] Նույն տեղում, էջ 39։

Պեշիկթաշլյանի պոեզիայի լավագույն էջերից են Զեյթունի ապստամբության նվիրված բանաստեղծությունները, որոնք ստեղծված են բովանդակության և ձևի կուռ միասնությամբ։

Պեշիկթաշլյանը, բուրժուական դիրքերից, սակայն, ակտիվ կերպով արձագանքել է այն պայքարին, որ հայ առաջավոր մտածողները մղում էին օտարերկրյա գաղութարարների դեմ, հատկապես նրանց գործակալ կաթոլիկ հոգևորականության դեմ։ Հայտնի է, որ կաթոլիկական պրոպագանդայի դեմ մղվող պայքարի կենտրոնը Կ. Պոլսում հանդիսացավ ականավոր դեմոկրատ Հ. Սվաճյանի «Մեղու»-ն, իսկ արևելահայաստանում, շարժման հիմնական դեմքը Մ. Նալբանդյանն էր, որ սուր քննադատության է ենթարկել կաթոլիկ քարոզիչների գործունեությունը և բացահայտել է նրանց քաղաքական նպատակները։

Կ. Պոլսում օտարամուտ այդ շարժման դեմ մղվող պայքարի ընթացքում հանդես եկան մի շարք կազմակերպություններ, որոնցից առաջինը «Համազգայց ընկերությունն» էր հիմնված 1864 թ. Մ. Պեշիկթաշլյանի, դրամատուրգ, թատերական գործիչ Սր. Հեքիմյանի և ուրիշների նախաձեռնությամբ։

Պեշիկթաշլյանը, բացի հասարակական գործունեությունից, պայքարին միացրեց գեղարվեստական խոսքի հզոր ուժը՝ գրելով «Եղբայր ենք մենք» բանաստեղծությունը, որտեղ կոչ է արվում ասիմիլյացիայի ճանապարհին գտնվող հայերին՝ չհեռանալ իրենց ժողովրդից։

Տուր ինձ քո ձեռքդ, եղբայր ենք մենք,
Որ մրրրրկավ էինք զատված.
Բախտին ամեն ոխ չարաննենգ
Ի մի համբույր ցրվին ի բաց.
Ընդ աստեղոք ինչ կա սիրուն,
Քան պանձկալի եղբայր անուն [1]։

Պեշիկթաշլյանը երկի հիմնական գաղափարը՝ եղբայրությունը սահմանափակել է ազգային շրջանակների մեջ և մեր օրերում նա այլևս չի հնչում, բայց արժեքավորվում է պատմական մեծ ծառայության համար, որ մատուցել է ժամանակին։ Սրանով պետք է բացատրել այն մեծ ժողովրդականությունը, որ ունեցել է «Եղբայր ենք մենք»-ը, և վերածվելով երաժշտության [2], երգվել է երկար տասնամյակներ։

Պեշիկթաշլյանի ստեղծագործության մեջ հատուկ ուժգնությամբ է հնչել սերը դեպի հայրենիքը, որն արտահայտվել է կարոտի բուռն տենչով. նա հայրենիքը երգել է ջերմությամբ, առանց հույզերի ավելորդության ու սանտիմենտալիզմի։ Բանաստեղծը տեսել է իրական հայրենիքը, որը երբեմնի երևակայած՝ փառքի ու հզորության Հայաստանը չէ, այլ ընկած է նա, բռնության լծի տակ ճնշված ու ավերված։ Մոայլ է հայրենիքի ներկան, նա պատուրված է թախծով, բնությունն անգամ վշտարեկ է.

[1] Մ. Պեշիկթաշլյան, Տաղեր, Երևան, 1947, էջ 17։

[2] «Եղբայր ենք մենք»-ը առաջին անգամ լույս տեսավ Տ. Զուխաջյանի և Գ. Երանյանի հրատարակած «Քնար հայկական» հանդեսի մեջ, 1862։ Տերբստ երաժշտության է վերածել իտալացի երաժշտագետ Ֆոսքինին։

Մութ է գիշերս, ինչպես սիրտս ալ.
Եվ թուխ ալիս մշտափրփուր
Վանա ծովուն ծիածավալ
Հառաչանոք լի են տրխուր.

Գոց են ամպով աստղունք... և հույս,
Դեռ շատ հեռու է Արշալույս [1]։

Պեշիկթաշլյանին չի ահաբեկում խավարը, նա հոռետես չէ, լալկան ու հուսահատ. ընդհակառակը, կյանքը սիրող ու ողջունող, լավատես դեպի ապագան։ Հին ցավերից վշտահար ծերունի վանեցին հրաժեշտ է տալիս կյանքին, Արիտասարդ սերնդին գուշակելով գալիք արշալույսը։

Եվ դու Մեհեկ, կուլա՞ս անհույս,
Ո՞հ, ո՛չ, գընա... դա Արշալույս [2]։

Հայրենասիրական բանաստեղծություններում Պեշիկթաշլյանի խոհերի ու մտորումների անբաժանելի ընկերը բնությունն է, որը միայն հիացմունքի, կույսի հրապույրների համեմատության առարկա չէ, կամ պասսիվ նկարագրությունների աղբյուր։ Նա ներգործող, տրամադրություններ ու հույզեր ստեղծող մեծ ուժ ունի և բանաստեղծը այնտեղ է վերապրում հեռավոր երկրի կարոտը։

Բնության վերակենդանացումը, զովաշունչ գարնան զարթոնքը հեղինակին ներշնչում են ավերակների վերածված հայրենի երկրի սգավոր բնության գերաղանց հմայքը, որը գեղեցիկ ձևով արտահայտված է «Տարուն» բանաստեղծության մեջ։

Թեպետ թուչնիկն ու հովն Հայոց
Ավերակաց շրջին վերա
Թեպետ պղտոր վրտակն Հայոց
Նուռիներու մեջ կը սողա
Նոքա հառաչք են Հայրենյաց
Նոքա չերթա՛ն սրբոտես ի բաց [3]։

Բանաստեղծությունների վերոհիշյալ շարքը լավագույն արտահայտությունն են Պեշիկթաշլյանի քաղաքական հայացքների ու իդեաների։ Պեշիկթաշլյանը լիբերալ էր. նրա հասարակական գործունեության մեջ չկա հեռավոր արձագանքն անգամ դասակարգային հակասությունների ու դասակարգային պայքարի ըմբռնմանը։ Նա չթափանցեց հայ հասարակական կյանքի տնտեսական և քաղաքական հարաբերությունների մեջ, չտեսավ սոցիալական ներքին հակասությունները, աղաների, էֆենդիների ու ամիրաների հարստահարությունները ու շահագործումները։ Նա տեսավ միայն օսմանյան կայսրության բռնության լուծը և ողջունեց Զեյթունի ապստամբությունը։ Այս էր Պեշիկթաշլյանի քաղաքական պայքարի բարձրագույն արտահայտությունը «ազգի» աղատության, իրավունքների նվաճման համար։

---

[1] Մ. Պեշիկթաշլյան, Տաղեր, Երևան, 1917, էջ 43։
[2] Նույն տեղում, էջ 44։
[3] Նույն տեղում, էջ 19։

Պեշիկթաշլյանն ունի նաև մանկական բանաստեղծություններ՝ «Ողբ մանկան», «Առ Գոհարիկ», «Երգ առ մանկիկ»։

Որպես բանաստեղծական հղացում «Ողբ մանկան»-ը թույլ է և անարժեք։ Բովանդակության առանցքը թոշունի մահն է և մանուկի հոգեկան ապրումները։ Մանուկը իր հույզերով խիստ անմիջական է. նրա ուրախությունն ու վիշտը չունեն հարատևություն, իսկ հանդերձյալ կյանքով մխիթարվելու գաղափարը հեռու է նրա մտածողությունից և անհարիր է հոգուն։

Պեշիկթաշլյանի տարածված երգերից է «Առ Գոհարիկ»-ը, որի ժողովրդականությանը նպաստել է հատկապես տեքստի երաժշտության վերածումը։ Փոքրիկ տողերի մեջ, պարզ, առանց պատկերների և բովանդակության խճողման նկարագրված է քմահաճ ու կամակոր չարաճճի աղջիկը։ Բանաստեղծը այստեղ ևս աղջկա հրապույրները զուգադրում է բնության գեղեցկություններին և նրանցով ամբողջացնում Գոհարիկի պատկերը.

Երբ որ իջնա պարտեղիկ
Քաղել ըվվարդ կամ հասմիկ,
Դու չես կրնար որոշել՝
Ով է վարդ, ով Գոհարիկ [1]։

Պեշիկթաշլյանի մանկական երգերը բանաստեղծական վարպետության կամ առանձին շնորհքի արգասիք չեն և ոչինչ չեն ավելացնում նրա ստեղծագործական դանձարանի մեջ, ուշագրավ են որպես երևույթ միայն։

* *

Պեշիկթաշլյանը հայ նոր գրականության ուշագրավ դեմքերից է, արևմտահայ աշխարհաբար, նոր պոեզիայի հիմնադիրներից, որն իր բանաստեղծություններում խորը հուզականությամբ երգել է հայ ժողովրդի ազատագրական պայքարը, հայրենիքի սերը, բնությունը։ Նրա ստեղծագործություններից մի քանիսը մոտ մեկ դար պահել են իրենց թարմությունը և մեր օրերում էլ ջերմ ընդունելություն են գտնում սովետահայ ընթերցողի կողմից։

---

[1] Մ. Պեշիկթաշլյան, Տաղեր, Երևան, 1947, էջ 51։